ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

ՀՐԱՄԱՆ № 138

«17» 12 2020 թ. գ. Երևան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-Ն 277-Ն օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 12-րդ կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N 79-Ն որոշումով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների» N 2 աղյուսակի 1087 ծրագրային դասիչով «Դատավարական ղեկավարում դատախազական հսկողություն» ծրագրի 11002 «ՀՀ դատախազության պահուստային ֆոնդ» միջոցառման դասիչով Հայաստանի Հանրապետության դատախազությանը հատկացված միջոցների հաշվին պետական մարմինների կողմից իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ դատական փորձաքննությունների իրականացման ծառայությունները ձեռք բերել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարաններից (քրեական

գործերով) կամ քրեական հետապնդման մարմիններից ստացված համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշումների հիման վրա:

2. Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը 2020 թվականի համար սահմանված է 560 դրամ:

3. Հաստատել փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի (կցվում է):

4. 2020 թվականի ընթացքում տվյալ ծրագրին հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում, անհրաժեշտության դեպքում, փոփոխել սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակը՝ ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմինների կողմից ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանի հավելվածով նախատեսվածին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 2-օրյա ժամկետում այն հրապարակել Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի դեկտեմբերի 17-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի 2020 թվականի
դեկտեմբերի 17-ի N 138 հրամանի

2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակի անվանումը	Միավորի նախահաշվային արժեքը /դրամ/	Քանակը /հատ/	Ընդամենը նախահաշվային արժեքը /հազ.դրամ/
Ձեռագրաբանական	25200	4	100.8
Փաստաթղթաբանական	33600	6	201.6
Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	67200	4	268.8
Հետքաբանական	25200	12	302.4
Ձգաբանական	33600	31	1041.6
Պայթյունատեխնիկական	50400	28	1411.2
Նյութագիտական	33600	11	369.6
Սննդային	33600	6	201.6
Կենսաբանական/հողագիտական	33600	32	1075.2
Հրդեհատեխնիկական	50400	7	352.8
Շինարարատեխնիկական	33600	4	134.4
ՃՏՊ հանգամանքների	16800	6	100.8
ՏՄ տեխնիկական վիճակի	50400	3	151.2
Տրանսպորտային հետքաբանական	50400	5	252.0
Տնտեսագիտական, հաշվապահական	100800	1	100.8
Ապրանքագիտական	16800	20	336.0
Համակարգչատեխնիկական	84000	16	1344.0
Մշակութային արժեքների	67200	4	268.8
Ճարտարագիտատեխնիկական	84000	7	588.0
Լինգվիստիկական	85680	1	85.7
Հոգեբանական	85680	6	514.1
Դատաբժշկական	69440	10	694.4
Դատաքիմիական/թունաբանական	11760	6	70.6
Էկոլոգիական	33600	1	33.6
Ընդամենը փորձ/պ/պ		231	10000.0